

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 սեպտեմբեր 2018 թվականի N 91-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՆԻՆ ՆԿԻՐՎԱԾ  
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԿԱՊԱՆԻ  
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ  
ՍՈՒԲՍԻԴԻԱ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրով նախատեսված հատկացումները՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Հայաստանի Հանրապետության Անկախության տոնին նվիրված մշակութային միջոցառում կազմակերպելու նպատակով «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 900.000 (ինը հարյուր հազար) դրամ՝ կնքելով հանձնարարության պայմանագիր:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Անկախության տոնին նվիրված մշակութային միջոցառման կազմակերպական կոմիտեի կազմը, անցկացման ծրագիրը, աշխատակարգը, ծախսերի նախահաշիվը և ժամանակացույցը՝ համաձայն 1-5 հավելվածների:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ



2018թ սեպտեմբերի 13  
Ք. Կապան



ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ  
Հայաստանի Հանրապետության Անկախության տոնին նվիրված միջոցառման

1. Կ.Համբարձումյան - ՀՀ Սյունիքի մարզպետ /նախագահ/
2. Գ.Թադևոսյան - ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ
3. Ս.Դավթյան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ
4. Մ.Գանդալյան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
5. Ս.Ավետիսյան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ
6. Ա.Սիմոնյան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ
7. Թ.Կարապետյան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ
8. Ա.Աբրահամյան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ
9. Վ. Արզումանյան - «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

ՀՀ Սյունիքի մարզպետարանի  
գլխավոր քարտուղարի տեղակալ

  
Գ. Թադևոսյան  


### ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության անկախության տոնին նվիրված միջոցառման

Միջոցառման նպատակն է՝ ճանաչելու մեր հայրենի բնաշխարհը, պատմամշակութային կոթողները, մոտ լինելու հայի ինքնությանը և սիրել այն, գիտակցելու, որ յուրաքանչյուր սերունդ առաքելություն ունենա սրբությամբ պահելու-պահպանելու հայոց հողը և պատասխանատվությամբ վերաբերվել հայ մնալու իր կոչմանը, մարզի բնակչության շրջանում ներկայացնել մեր անկախ պետականության կայացած լինելը, ազգային արժեքների գնահատումը, հայրենասիրական գաղափարների տարածումը, միասնական հայրենիք կերտելու գաղափարների ամրապնդումը, գեղագիտական դաստիարակության խնդիրների իրականացումը, հայրենիքի նկատմամբ հավատի դրսևորումը:

Միջոցառմանը մասնակցում են մարզի համայնքներից ժամանած երաժշտական խմբեր, անհատ կատարողներ, հանրակրթական դպրոցների աշակերտներ:

Մարզկենտրոն Կապան քաղաքում կկազմակերպվի «Հայրենի գույներով» խորագրով նկարչական աշխատանքների ցուցահանդես:

Տոնական համերգ Սյունիքի մարզում տեղակայված N զորամասերում:


Անկախության տոնին նվիրված ՀՀ Սյունիքի մարզպետի շնորհավորանքներ և պարգևատրումներ հուշանվերներով հայկական բանակում ծառայողներին:

Պսակադրություն Արցախյան պատերազմում անհայտ կորածների հուշարձանին ու զոհված ազատամարտիկների շիրիմներին:

Հանդիպում երկրապահ կամավորական միության անդամների և զոհված ազատամարտիկների ընտանիքների հետ:

Հրավառություն:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի  
գլխավոր քարտուղարի տեղակալ



Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

Հայաստանի Հանրապետության անկախության տոնին նվիրված միջոցառման

**Միջոցառման նպատակը**

Միջոցառման նպատակն է մարզի բնակչության շրջանում ներկայացնել մեր անկախ պետականության կայացած լինելը, ազգային արժեքների գնահատումը, հայրենասիրական գաղափարների տարածումը, երիտասարդության ու մատաղ սերնդի մեջ մշակութային արժեքների գնահատումը, միասնական հայրենիք կերտելու գաղափարների ամրապնդումը, գեղագիտական դաստիարակության խնդիրների իրականացումը, հայրենիքի նկատմամբ հավատի դրսևորումը:

**Միջոցառման պատվիրատուն և կատարողը**

Անկախության տոնին նվիրված միջոցառման պատվիրատուն է՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանը, կատարողը՝ ՀՀ Սյունիքի մարզային ենթակայության «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը մարզի համայնքների մասնակցությամբ:

**Միջոցառման մասնակիցները**

Անկախության տոնին նվիրված միջոցառմանը մասնակցում են մարզի համայնքներից ժամանած երաժշտական խմբեր, անհատ կատարողներ, հանրակրթական դպրոցների աշակերտներ:


**Միջոցառման ժամկետը և վայրը**

Միջոցառումներն անց են կացվելու ս/թ սեպտեմբեր ամսում՝ մարզի համայնքներում:

**Միջոցառման ընթացքը և ծախսերը**

Անկախության տոնին նվիրված միջոցառումները կազմակերպվում են ըստ անցկացման ծրագրի, որը հաստատված է ՀՀ Սյունիքի մարզպետի կողմից, որտեղ արտացոլված են ծրագրի ժամանակացույցը, միջոցառումների անցկացման վայրը և ժամանակը: Միջոցառման ընթացքում տեղի ունեցող փոփոխությունները համաձայնեցվում են կազմկոմիտեի հետ: Միջոցառումների անցկացման հետ կապված բոլոր ծախսերը հոգում է պատվիրատուի կողմից կատարող կազմակերպությունը:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի  
գլխավոր քարտուղարի տեղակալ



ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ  
 Հայաստանի Հանրապետության Անկախության տոնին նվիրված մշակութային  
 միջոցառման

h/h	Ծախսերի անվանումը	Հոդված	Գումարը /դրամ/
1	Տրանսպորտային միջոցների վարձակալում	4216	55,0
2	Սարքեր և սարքավորումների վարձակալում	4216	40.0
3	Տեղեկատվական ծառայություններ (գովազդային պաստառներ 3x4)	4234	30,0
4	Հանրային սննդի ծառայություն	4236	25.0
5	Նվերներ	4237	50.0
6	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ /հրավառություն/	4239	500.0
7	Մասնագիտական ծառայություններ	4240	180.0
8	Գրասենյակային ապրանքներ և նյութեր	4261	20.0
	Ընդամենը		900.0

ՀՀ Սյունիքի մարզպետարանի  
 գլխավոր քարտուղարի տեղակալ

*[Handwritten signature]*

Գ. Թադևոսյան



**ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

Հայաստանի Հանրապետության Անկախության տոնին նվիրված միջոցառման

h/h	Միջոցառման անվանումը	Ժամկետը	Վայրը
1	«Հայրենի գույներով» խորագրով նկարչական աշխատանքների ցուցահանդես, նվիրված Հայաստանի Հանրապետության 27-ամյակին:	21-ին սեպտեմբեր 2018թ	Կապան համայնք
2	Համերգ մարզում տեղակայված N գորամասերում	20-ին սեպտեմբեր 2018թ. ժամը 12 <sup>00</sup>	ՀՀ Սյունիքի մարզում տեղակայված N գորամաս
3	ՀՀ Սյունիքի մարզպետի և համայնքի ղեկավարների հանդիպում Հայկական բանակում ծառայող և Արցախյան ազատամարտի մասնակից վետերանների հետ:	21-ին սեպտեմբեր 2018թ	Մարզի համայնքներ
4	Անկախության տոնին նվիրված ՀՀ Սյունիքի մարզպետի շնորհավորանքներ և պարգևատրումներ հուշանվերներով հայկական բանակում ծառայողներին:	20-ին սեպտեմբեր 2018թ ժամը 12 <sup>00</sup>	ՀՀ Սյունիքի մարզում տեղակայված N գորամաս
5	Պսակադրություն Արցախյան ազատամարտում զոհվածների շիրիմներին և անհայտ կորածների հուշարձանին	21-ին սեպտեմբեր 2018թ ժամը 11 <sup>00</sup>	Մարզի համայնքներ
6	Հրավատություն	21-ին սեպտեմբեր 2018թ ժամը 21.00	Կապան համայնք

ՀՀ Սյունիքի մարզպետարանի  
 գլխավոր քարտուղար

